«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Նաիրա Մկրտչյան

Մանկապարտեզ՝ «Կարմիր գլխարկ» ՀՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Ազգային տոներն ու ծեսերը……5

Ծես……6

Ամանոր……7

Տյառն ընդառաջ……8

Բարեկենդան……9

Զատիկ……10

Ծիսական Խաղերի իրականացում……13

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ինքներս պետք է հավատանք այն ամենին,
ինչ սովորեցնում ենք մեր երեխաներին:
Վուդրո Վիլսոն

Ծեսի իրականացումը նախակրթարանում հենց ծես է՝ ուսումնական «արարողակարգ»: Սա սովորական ուսուցում չէ, սա միասին ապրել է, միասին ապրելու կրթություն ստանալ է՝խաղով, երգ ու պարով, ավանդական և ոչ ավանդական տարրերով հագեցած: Դաստիարակը, ծնողը այն մարդիկ չեն, ովքեր ինչ-որ բան են սովորեցնում կամ թելադրում, այլ մարդիկ են, ովքեր ոգեշնչում են, որ սանը, սովորողը ինքնուրույն բացահայտի, հայտնագործի ու ապրի իմացումի՝ իրեն հատուկ, յուրովի հրճվանքը: Ծեսի իրականացումն անարդյունավետ ու ինքնանպատակ կլինի, եթե այն չլինի կյանքով ուսուցում, որտեղ սանն ինքն է խաղում, բացահայտում, և այս ամենն անընդհատ է, սանի համար հայտնագործությունների անվերջ շղթա, որով ապրում է իմացումի անծայրածիր հրճվանքը: Ծեսի մասնակիցներն ինչպես նախապատրաստական, այնպես էլ իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը, քայլ առ քայլ ազատ միջավայրում իր առօրյա գործունեությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, ակամայից յուրացնում է ծեսը: Բաց, թափանցիկ, ազատ միջավայրում, առանց անգիրի, առանց հատուկ մշակված, դերային բաժանում արած տեքստի՝ նրանք խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, թռնոցիներով, բակային և ազգային խաղիկներով, ուտեստներով, թավալվելով, ալրոտվելով և այս ամենը տեղափոխում տուն՝անմիջական մասնակիցը դարձնելով ծնողին: Նախակրթարանում սանի համար ազգային-ավանդական ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախքան ծեսի նախապատրաստությունը, դաստիարակների ,երաժիշտների, տեխնոլոգների հետ քննարկում է կազմակերպում, հավաքում տեղեկատվություն տվյալ ծեսի մասին, և կազմում են աշխատանքային պլան: Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը,

որտեղ ստեղծվել են դրանք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ չի նշանակում ակունքից բոլորովին հեռանալ, հնարավոր է հնի վրա կառուցել նորը: Այդ ժամանակ նաև բանահավաքչությամբ ենք զբաղվում. ծնողներից, տատիկ-պապիկներից ձայնագրում կամ գրառումներ ենք կատարում, հետաքրքիր սովորույթները, ավանդույթներն ուսումնասիրում, քննարկում ենք մասնագետների հետ և ներառում նախագծերի մեջ: Դրանք կարող են լինել մեզ դեռևս անծանոթ օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ, ուտեստներ, հետաքրքիր ավանդույթներ, ինչպես նաև արդեն հայտնի ժողովրդական ստեղծագործությունների տարբերակներ, որոնք մշակում ենք և կիրառում: Դաստիարակը ոչ միայն հետազոտական, ստեղծական աշխատանք է կատարում, այլև դառնում է իր գործունեության նախագծողը, իրականացնողը և տարածողը: Հետազոտականի նպատակն է ծեսը դարձնել երեխայինը, և որ նա լինի ոչ միայն մասնակիցը, այլև փոխանցողը ու տարածողը:

Գլուխ1

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Ծեսի նախապատրաստում, ծիսակատարություն, որը ներառում է՝ ծիսական երգեր, ոտանավորներ, պարեր, ազգային ծիսական խաղիկներ-թռնոցիներ, ծիսական տիկնիկներ, կերպարներ, ծիսական ուտեստներ և այլն: Ծիսական երգերի, ոտանավորների, խաղիկների, թռնոցիների և պարերի ընտրության ժամանակ մեզ օգնում են երաժիշտները: Երաժիշտ Մարինե Մկրտչյանի բլոգը մի մեծ գանձարան է, որից օգտվում ենք բոլորս: Ծիսական ուտեսների հարցում շատ օգնում են սաների տատիկները: Նրանք մեծ ոգևորվածությամբ մասնակցում են բոլոր ծեսերին: Ծիսական տիկնիկներ.Բոլոր ազգային ծեսերն առանձնանում են իրենց ծեսին հատուկ տիկնիկներով: Այդ ընթացքում մեր ձեռքերով պատրաստում ենք տիկնիկներ, ցույց տալիս դրանց դերը ծեսի ժամանակ: Դրանցից են՝ Անձրևաբեր տիկնիկը, Ակլատիզը, Ուտիս տատը, Նոզայի տիկինիկը, Ծաղկամայր տիկնիկը… Ընտրելով, հայթայթելով համապատասխան նյութեր՝ ստեղծում ենք մեր իսկական՝ ծիսական տիկնիկները, որից հետո խաղում ենք մի մեծ խաղ-ծիսական ներկայացում: Չորացած ճյուղերով պատրաստում ենք կախարդական զատկածառեր, մոմլաթե տոպրակներով՝ տարբեր կերպարներ և իրեր, որոնք կօգտագործեն առօրյայում, փայտե և այլ թափոններից զանազան շրխկաններ և այլն: Աննկարագրելի մի զգացողություն է պատում երեխային, երբ նա ունենում է տիկնիկ ոչ թե խանութից գնած, այլ հենց իր ձեռքերով ստեղծած: Նա ստեղծում է իր պատկերացրած, երևակայած, իր ուզած համազգեստով և գույներով, իր հեքիաթի տիկնիկը: Ստեղծում ենք նաև հեքիաթների հերոսներին պլաստիլինից, կավից, ձեռնոցներից, գուլպաներից ու գեղեցիկ հեքիաթի բեմադրություն խաղում, որից հետո կազմակերպում ենք ցուցահանդես — վաճառք, ինչպես նաև նվիրում մեր գործընկերներին: Այսպես են դաստիարակը, սանը և ծնողը տիրապետում ազգային ծեսերին, սովորույթներին, ազգային-ավանդական պարերին: Նախակրթարանում իրականացված ծեսերի փաթեթ՝ «Ատամհատիկի ծես» «Խաղողածես» «Ղափամայի ծես» «Լավաշթխիկի ծես» «Ծննդյան ծես» «Համբարձման ծես» «Վարդավառի ծես» «Ամանորի ծես. Ավետիսներ» «Տյառնընդառաջի ծես» «Զատկածես» «Մայրիկատոն» «Բարեկենդանի ծես» «Թթուդրիկի ծես» «Հարիսայի ծես» Ծիսական նյութերի փաթեթ՝ Ծիսական երգերի

փաթեթ Ծիսական ասիկների- ճվիկների, խաղիկների-թռնոցիների փաթեթ Ծիսական կերակրատեսակների փաթեթ Ծիսական տիկնիկների փաթեթ

Ծեսեր, ծիսական գործողություններ Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ: Խնդրի իրագործման համար սաները. սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ, նկարում են

ա. ծիսական հերոսներին,

բ. ծիսական պարագաներ,

պատրաստում են ծիսական պարագաներ դաստիարակի, ծնողի օգնությամբ, խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր, բեմականացնում են երգեր, կատարում են բնագիտական փորձեր, գնում են ուսումնական ճամփորդության, հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք, վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները: Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով՝ յուրացնում է ծեսը: Ի՞նչ խնդիրներ են լուծվում. նյութի յուրացում կարողությունների դրսևորում, խոսքի զարգացում, տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական), գրական — գեղարվեստական ճաշակի զարգացում, ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից: Այս աշխատանքները նպաստում են երեխայի բառապաշարի հարստացմանը, մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը, բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը, ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ, զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն), ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին: Սանը կիմանա ազգային ծեսը, ազգային սովորույթները, հայկական ժողովրդական և ծիսական երգերը, ծիսական կերպարները, ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը, ծիսական կերակրատեսակները, ծիսական պարագաները: Սանը կկարողանա երգել

հայկական ժողովրդական և ծիսական երգեր, պատրաստել ծիսական պարագաներ, խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր: Սանը կլինի ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող: Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Գործունեության ձևերի ինտեգրումը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս Մայրենի — գիտեն ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առած-ասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին): Մարմնակրթություն — գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր: Բնագիտություն — կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին այդ տարիքին համապատասխան գիտելիքներ: Ձեռարվեստ, կերպարվեստ — պատրաստել ծիսական պարագաներ, կատարել նյութի ընտրություն: Խոհանոց — ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ պատրաստելիս դաստիարակի, ծնողի կողքին լինել մասնակից:

Ծ Ե Ս

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը դեպի ծեսը:Ազգայինը պահելու պահպանելունը,կախված է յուրաքանչյուր երեխայի մեջ դաստիարակել հայ մարդ,որը կարող է պահպանել իր մշակույթը:Չէ որ ազգայինը ,դա մեր պետականությունն է:

ԱՄԱՆՈՐ

Ազգային տոներն ու ծեսերը, ծիսական միջոցառումները սկսվում են նոր տարվա ծեսից: Տոնն ունեցել է տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալանտար, Կալոնտար: Տոնական սեղանին դրվող ամենագլխավոր խմորեղենը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փյունիկ» և այլ անուններով ծիսական հացն էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն: Նոր տարվա նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան երեխաները խմբերով շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Գովերգում էին ընտանիքի անդամներին, բարեմաղթանքներ հղում: Սովորաբար տոնը, ծեսը ուներ ծիսական կերպար(կերպարներ), որի(որոնց) անունից արտահայտում էին իրենց սպասելիքները տանտերերից: Տանտիկինները կախված տոպրակի մեջ դնում էին մրգեր, խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն: Պոնտոսի շրջանում տանտերը մի ձիթենու ճյուղ էր կտրում բերում տուն՝ իբրև կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր եկեղեցի՝ քահանային օրհնել տալու: Տոնը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Սեղանին պարտադիր դրվում էր 7 տեսակ միրգ, 7 ճաշատեսակ և այլ ուտեստներ: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Ընթրիքից հետո սկսվում էին տոնական այցելությունները: Երեխաների սիրված խաղերից էին վեգը և ընկուզախաղերը:

ԾՆՈՒՆԴ /ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ/ Նոր տարուն հաջորդում են Ծնունդ (Աստվածահայտնություն), Զրօրհնեք (Մկրտություն) տոները: Մեր եկեղեցին Սուրբ ծնունդը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է ս. Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»:

ՏՅԱՌՆ ԸՆԴԱՌԱՋ-

Հա յ Առաքելական Եկեղեցին Տյառն ընդառաջը տոնում է փետրվարի 13–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Երբ Մարիամն ու Հովսեփը քառասուն օրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս

Աստծուն, որ իր են արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը «Տեառնընդառաջ»՝ Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործողզորության հանդեպ ունեցած հավատի հետ: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը տանում տուն:Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելում իջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և միկողմի վրա փախչում: Այդ ընթացքում շատերը բակի խարույկից թիակով կամոր և է ամանով կրակ էին վերցնում և պտտեցնում տան շուրջը: Մեծ կարևորություն ուներ նաև Տյառն ընդառաջի խարույկի մոխիրը: Այն, ըստ պատկերա-ցումների, օժտված էր բուժող ու առատացնող զորությամբ:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդան նշանակում է բարիկենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Նախկինում դրանք հեթանոսակ անտոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարիկենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց ՄեծՊահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին զումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ ՔրիստոսիՀարությանտոնով: Բարեկենդանն այնքան

սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային («հայոցազգիօրեր»), ինչպես նաև ամենա երջանկաբեր, խրախճանք, ճոխուառատուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկուշաբաթ: Բուն Բարեկենդանի նախորդ օրը: Շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածակվում է, և այսպես շարունակվում է քառասուն օրյա պասի ընթացքում: Պասի ժամանակմատուցվում է փակ պատարագ. Ամուսնություններ տեղի չեն ունենում, արգելվում է մատաղանել, մինչ թույլատրվում է մկրտություն և նշան դրեք կատարել: ՄեծՊահքի (պաս) ամեն կիրակի իր առանձին տոնատերը: Առաջին կիրակին նվիրված էրԱրտաքսմանը, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատավորին, հինգերորդը՝ Գալստյան, վեցերորդը՝ Ծաղկազարդին և յոթերորդը՝ Քրիստոսի հարությանը: Պասի ընթացքում կենդանական ծագում ունեցող սնունդ չէին ուտում, այլ միայն բուսական: Ծաղկազարդ (ԾԱՌԶԱՐԴԱՐ) –Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինարենու, ուռենու պաշտամունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազանան տառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով: Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար, որը խորհրդանշել է գարնան գալուստը: Աստվածաշնչի մեջ կարդում ենք. «Եվ Տեր Աստված արևելյան կողմը՝ Եդեմի մեջ, պարտեզ տնկեց՝ «Եդեմիպարտեզը», ու իր շինած մարդը հոնդրեց: Եվ Տեր Աստված պարտեզին մեջտեղը Կենաց ծառը՝ Բարին ու Չարը գիտենալու ծառն էլ բուսցուց»: Քրիստոնեության շրջանում վերաիմաստա-վորված կենաց ծառը նույնացվել է Աստվածածնի հետ, այն առնչվում է խաչի, խաչափայտի, դրախտի հետ: Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. Մարդիկ իրենց զգեստներն ուարմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում.«Օրհնությու՛նԴավթիՈրդուն, օրհնյա՛լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Խաղաղությու՛ն երկնքում և փա՛ռք բարձունքներում»:

Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառհարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարի ցելուսն ի լրումից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ (մեծ) շաբաթ, որտեղ ամփոփված է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ամենա կարևոր շրջանը՝ուսուցումները, չարչարանքները, մահն ու հարությունը: ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝Նվիրված է երկնքի ու երկրի արարչագործությանը: ԱՎԱԳԵՐԵՔՇԱԲԹԻ՝Նվիրված է տաս կույսերի առակին: ԱՎԱԳՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝Օծում և մատնություն:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՝Առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ ՝ ի հիշատակ վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսի կողմից հաղորդության խորհրդի հաստատման: ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ՝Այսօրը եկեղեցին հիշատակում է Քրիստոսի չարչարանքները, խաչելություն ու թաղումը: ԱՎԱԳՇԱԲԱԹ՝Շաբաթ երեկոյան կատարվում է Զատիկի՝ Սուրբ Հարության Ճրագալույց ի պատարագ, երբ տրվում է Քրիստոսի Հարության ավետիսը, որով և ավարտվում է Մեծ պահքը: ՀԱՄԲԱՐՁՈՒՄ,ՎԻՃԱԿ,ԿԱԹՆԱՊՈՒՐԻ ՏՈՆ- Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օրերևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռանգագաթից սկսեց համբառնալ երկինք: Շուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օրանց և, պայմանա-վորված լինելով Զատիկով, բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի: ՝ Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց անեծքով դատապարտված արարածներին: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդնուկրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին:»: Եթե Զատկի տոնին առանձնա նանում , զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա

Համբարձմանն ակնկալվում է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիսդաշտերը և երգ-պարով, ուրախություններով սիրաշահում Մայրբնությանը: Համբարձումը բնության բեղունության ու արբունքի, բուսականության աճի տոնէ: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ:, , Տոնի մյուս կարևոր խորհուրդը. Այդ օրն արգելվում է արյուն հեղել՝ կենդանու զոհ մատուցել, որը դարձյալ բնությանը սիրաշահելու, կենդանիների բազմացման միտում ունի: Համբարձումը հեթանոսական բնապաշտության և քրիստոնեական գաղափարախոսության ժողովրդական ընկալման լավագույն զուգորդումն է:

ԳԼՈՒԽ 2

Ծիսական Խաղերի իրականացում

Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը:Օրինակ կարելի է համբարձման տոնին նվիրված ծեսի օրը կարելի է նրանցից վիճակով ընտրել մեկին կամ երկուսին, որ հերթով կհանեին նշանները: Երկուսի մեջտեղը դնում ենք խորհրդավ որ փարչը և երեքին միասին ծածկում անթափանց մեծ քողով: Երկու փոքրիկները, որոնց վիճակահարս էին ասում, ձեռները մինչև արմունկները վերքաշած, խառնում էին Փարչի ջուրը և միջի նշանները: Աղջիկները սկսում էին երգել վիճակի երգերը տուն առ տուն: Ամեն մի տուն երգից հետո Հարսը մի նշան է դուրս բերում ջրից, մեկն էլ կանգնում և ցույց է տալիս բոլորին: Ըստ այդ երգերի, աղջիկների և մյուսների համար շոշափվում է ընտանիք կազմելու, երջանիկ ապագայի կամ ապերջանկության հետ կապված հարցեր: Եթե լինում էին վիճակահանությունից դժգոհողներ, վերջում չէին ցրվում: Փարչի ջուրը լցնում էին մի թասի մեջ: Երկու աղջիկներ, որոնք իրենց ընտանիքի առաջնեկն էին, բութ մատներով բռնում էին թասը: Դժգոհը մոտենում էր, վերջին անգամ խորհուրդ էր անում և մատը քսում ջրի երեսին: Եթե ջուրը ձախպ տտվեր, նշանէր, թեվ ատգուշակությունն անպայման կկատարվեր, իսկ եթե աջպտտվեր, նշանակումէր, թե կարող էր փոխվելվատ գուշակությունը: Այս գործողությունը վերջին ապավենն էր, ուստի թաս բռնողները ճարպկությամբ այնպիսի ծածուկ շարժում էին անում, որ ջուրը աջ էր պտտվում, որով մեղմ անում էր դժգոհողների տխրությունը: Վիճակի ջուրը գետն ինչ էին թափում, այլ լցնում էին հոսող ջրի մեջ, քսում մազերին, որ երկարեին, շաղ էին տալիս արտերում, խոտհարքներում: Շիրակում նույնիսկ հիվանդատերերը այդ ջրից տանում էին, քսում իրենց հիվանդի գլխին, որպեսզի վերջինս շուտ առողջանաու կազդուրվի: Երեկոյան տուն վերադառնալուց առաջ Վիճակի տիկնիկը մաս – մաս էր արվում, ամենմեկը նրա վրա կախած իր զարդն էր վերցնում: Մերկացած տիկնիկը մնում էր դաշտում: Համբարձումից մինչև Վարդավառ ու խտատեղի չէին գնում, համարելով, որ սրբերը համբարձված են: Այդ ընթացքում ոմանք (հատկապես անժառանգները) պահում էին ս. Կարապետիպասը, որն ավարտվում էր Վարդավառին դեպի Մշոս. Կարապետ ուխտագնացությամբ: Ուսումնասիրելով ծեսերը և ծիսական գործողությունները , դրանք կարևորվում են նաև երեխայի կրթադաստիարակչական աշխատանքում: Ազգային ծեսերն իրենց ուրույն դերն

ու նշանակությունն ունեն երեխայի զարգացման գործում։ Ծեսը ինքը ինտեգրված գործողություն է ,որը հնարավորություն է տալիս երեխային մի գործունեոության ընթացքում ազդել զարգացման բոլոր ոլորտների վրա։ Ծեսը իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել ծիսական միջավայր։ Ծիսական միջավայրը դա. 1 Երեխայի զարգացման ֆիզիկական միջավայրն է համալրված ծիսական ձևավորումներով,ծիսական առարկաներով ու խաղալիքներով։Ֆիզիկական միջավայրը տվյալ ծեսին համապատասխան ծիսական միջավայրի վերածելու գործում կարևոր է երեխայի անմիջական մասնակցությունը։ 2 Նյութական միջավայրը ,որում նույնպես կարևոր է երեղայի մասնակցությունը։ Միջավայրի մթնոլորտը նույնպես պետք է լինի տրամադրող, տվյալ ծեսին համապատասխան շունչ հաղորդի։ Ծիսական միջավայր կարող է լինել տունը, մանկապարտեզի խմբասենյակը , դահլիջը,բակը ,բակ – պարտեզը։ Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի **մտավոր զարգացման** վրա։ Ինչպես գիտենք օրինակ կան ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները։ Իմացական հմտությունների հարցում մեծ նշանակություն ունի նաև երեխաների հետ կազմակերպած երկրագործի աշխատանքները, ինչի շնորհիվ երեխան ձեռք է բերում գիտելիքներ բնության երևույթների մասին և հրստացնում բառապաշարը նոր բառերով։ Այդ խաղերի միջոցով նրանք փորձում են կապեր գտնել լսած տեղեկությունների ու կատարած գործուղությունների միջև, ստեղծագործել ու ավելացնել նորը։ Նրանք փորձարկում են այդ ամենը և սովորում փորձի ու սխալի միջոցով։ Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝ զգացմունքային, սոցիալական, լեզվական։ Նախադպրոցական ուսումնական հաստատության սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենա-արդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական։ Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով։ Խաղը զարգացնում է երեխայի ուշադրությունը,հիշողությունը,երևակայությունը։

Ամանորը մեր մանկապարտեզում

Ամեն տարի մենք մեր մանկապարտեզում յուրովի տոնում ենք ազգային տոները: Տոնի խորհուրդը երեխաների համար պետք է լինի լիովին հասկանալի և հետաքրքիր: Դա իրականացնելու համար պետք է երեխաներին ինտեգրել այդ տոնին նվիրված նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը: Ամանորյա ցերեկույթը մանկապարտեզում ուսումնական տարվա ամենագլխավոր իրադարձությունն է, որը ամենասպասվածն է ինչպես երեխաների, այնպես էլ ծնողների և մանկապարտեզի թիմի կողմից: Այժմ կներկայացնեմ Ամանորյա տոնին նվիրված միջոցառման կազմակերպման ընթացքը:

Թեման՝ -Ամանոր

Տարիքային խումբ՝ - Միջին խումբ (4-5 տարեկան)

Տևողությունը՝ - Դեկտեմբերի 1-ից 27-ը

Նպատակը՝ - Երեխաներին մասնակից դարձնել ամանորյա ծեսի նախապատրաստություններին:

Կզարգանա երեխաների հիշողությունը, ոշադրությունը, մտածողությունը:

Կհարստանա բառապաշարը նոր բառերով:

Կզարգանա երեխաների ստեղծագործական կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ՝ - Ամանորյա զարդարանքներ, տոնածառ, տոնածառի խաղալիքներ, երեխաների ձեռքով պատրաստած փաթիլներ, ամանորյա տիկնիկներ:

Մեթոդներ՝ - անհատական, խմբային, ծնողների հետ համագործակցություն:

Ընթացքը՝ - Սովորում ենք ձմռան ամիսները, նշում ենք ձմռանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

Երեխաների համար ընթերցում ենք ամանորի, տոնածառի, Ձեռ պապիկի, խաղալիքների մասին տեղեկատվական նյութեր:

Ապլիկացիա – Ձնեմարդ, ձյան փաթիլներ,ուլունքներ եղևնու համար

Ծեփ – Ձնեմարդ, տոնածառի խաղալիք

Նկարչություն- Ձմռան տեսարան ըստ մտահաղացման, զարդարված եղևնի:

Սովորում ենք ամանորին նվիրված երգեր, ոտանավորներ, պարեր, ընթերցում ենք ձմռան և ամանորի վերաբերյալ հեքիաթներ:

Ներգրավում ենք ծնողներին և երեխաների հետ միասին պատրաստում ենք ամանորյա զարդարանքներ՝ ամանորյա տիկնիկներ, ձնեմարդուկներ, շնորհավորական բացիկներ, զարդարումենք մեր խմբասենյակը, մանկապարտեզը, բակը, տոնածառը:

Ամանորյա միջոցառման օրը մեզ հյուր են գալիս Ձեռ պապը և Ձյունանուշը: Երեխաները ձմեռվա հեքիաթի հերոսներ են դառնում, երգում են, արտասանում են, գուշակում են հանելուկները, և ամենակարևորը ստանում են իրենց կողմից այդքան սպասված նվերները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատ-կություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:Աշխատանքը գրելիս և հետադարձ հայացք գցելիս ևս մեկ անգամ հասկացա, թե ինչքան աշխատանք ենք կատարել մանկապարտեզում և դեռ հազարապատիկ շատ էլ կհասցնենք կատարել:

Այսպիսով հետազոտության արդյունքում տեսական գրականության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների, ուսումնասիրության և վերլուծության, ծեսերի և ազգային տոների ուսումնասիրման ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է: Այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց մտքերը, գաղափարները, միասնական գործողությունները:Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https:// https://greeks.am/azgayin-toner/

2. www.armgeo.am/ancient-armenian-holidays/

3.Ազգային տոներ հեղ.՝ Խառատյան

4.Ազգային տոներ հեղ.՝ Ա. Սարգսյան

5.Հայկական ծեսերը հեղ. ՝Ռիմա Ռստկյան